ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

լրագրող Թեհմինե Ենոքյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Աննա ԻՍՐԱԵԼՅԱՆ
Հայկուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել անկախ լրագրող Թեհմինե Ենոքյանը՝ խնդրելով պարզաբանել. արդյո՞ք արդարացի են քննադատությունները լրագրողի հասցեին, եթե հանրային միջոցառումների ժամանակ նրա նկարահանած տեսանյութերն իրավապահ մարմինները հետագայում օգտագործում են քրեական գործ հարուցելու համար եւ դնում են մեղադրանքի հիմքում: Արդյո՞ք այդպիսի քննադատությունները անաչառ լրագրությունը խոչընդոտելու փորձեր չեն, եւ ինչպե՞ս պաշտպանել լրագրողին նման ճնշումներից:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, հիմնվելով իր աշխատակարգի 5.1 հոդվածի վրա, ներկայացնում է իր փորձագիտական կարծիքը:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. **Մեջբերում Թեհմինե Ենոքյանի դիմումից.**

«2016թ. հուլիսի 19-ին Սարի թաղ կոչվող թաղամասից ահազանգ եմ ստացել բողոքի ակցիա կազմակերպելու մասին: ՊՊԾ գունդը գրված «Սասնա ծռեր» խմբավորման գործողությունների հետևանքով 3 օր շարունակ նշված տարածքը չուներ հոսանք, ջուր, գազ և կապի միջոցներ, բնակիչները ծանր կենցաղային պայմաններում էին, եւ այդ իրավիճակը մարդկանց դրդել էր դուրս գալ փողոց ու իրենց բողոքը ներկայացնել: Բողոքի ակցիային որևէ լրագրող չէր մասնակցում, միայն սիրողական տեսախցիկով նկարահանող Հայկ Գրիգորյանը, Սարի թաղի իր ընկերների խնդրանքով, այցելել էր դեպքի վայր և իրականացնում էր նկարահանումներ, շեշտեմ՝ տեսախցիկը պատկանում էր ինձ: Բողոքի ակցիայի ընթացքում տեղի ունեցավ բախում, որից հետո նկատվեցին նաև ոստիկանության կողմից նկարահանող

հեռախոսները: Իմ նկարահանած տեսանյութը հրապարակվել է Lragir.am կայքում, խմբագրի կողմից որևէ փոփոխման չի ենթարկվել, կամ պահանջ չի ներկայացվել՝ փակել քաղաքացիների դեմքերը, անլսելի դարձնել հայհոյանքները ... Համացանցում հայտնված տեսանյութը՝ լինելով միակը դեպքի վայրից, բուռն արձագանք ստացավ, իսկ ոստիկանությունը քրեական գործ հարուցեց այս տեսանյութի հիման վրա և կալանավորեց սարիթաղցիներին: Ոստիկանությունը չհրապարակեց իր կողմից նկարահանված կադրերը՝ միակ աղբյուր թողնելով իմ տեսանյութը: Հնչեցին մեղադրանքներ իմ հասցեին, թե ես պարտավոր էի քողարկել քաղաքացիների դեմքերը մոնտաժային հնարքով: Ավելին՝ ինչպես քննիչները, այնպես էլ սարիթաղցիները ասում էին, որ եթե ես չնկարահանեի և չհրապարակեի, տղաները կլինեին ազատության մեջ»:

2. Տարբեր ժամանակներում նման մեղադրանքներ են հնչել նաեւ «Ազատություն» ռադիոկայանի, «Ա1+» հեռուստաընկերության եւ այլ լրատվամիջոցների հասցեին:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 4. **«Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները»**.

«1. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության եւ բազմակարծության սկզբունքների հիման վրա:
(...)
3. Արգելվում է՝
1) գրաքննությունը.
2) որեւէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ.»:

II. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 7. **«Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները»**.

« (...) 2. Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, եւ այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար եւ դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ,

բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաեւ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»:

III. Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր, Սկզբունք 1. **Ճշգրտություն եւ անկողմնակալություն**.

«Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝
(...)
1.6. չաղավաղել լուսանկարային կամ տեսագրված նյութի բովանդակությունը, լուսանկարներում և տեսանյութերում տեխնիկական հնարքներ կիրառելու և միջամտությունների դեպքում անպայման նշել այդ մասին»:

IV. Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր, Սկզբունք 4. **Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ**.

«4.2. այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը եւ պատասխանատվություն է կրում իր վճռի համար»:

V. «Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր, Սկզբունք 6. **Ազնվություն հանրության հետ հարաբերություններում**.

«6.4. Քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ԶԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության»:

VI. Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի ընդունած՝ **Պատերազմի, զինված բախումների եւ ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի** Ուղեցույց, բաժին Ա, կետ 2.

« (...) Պատերազմի, զինված բախումների եւ ներքին

հակամարտությունների ժամանակ առավել հստակ պետք է տարանջատված լինեն փաստերը, կարծիքները եւ մեկնաբանությունները: Այլապես լսարանը կարող է ինչ-որ մեկի կարծիքը կամ մեկնաբանությունն ընկալել իբրեւ կայացած փաստ, ինչը նման իրավիճակներում լսարանի մոտ իրադարձությունների վերաբերյալ ոչ համարժեք տպավորություն կստեղծի: (...)»:

Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հանրային միջոցառումները կամ հանրային վայրերում կատարվող իրադարձությունները, այդ թվում հանրահավաքները, բողոքի ցույցերը, բախումները լուսաբանելու, ինչպես նաեւ նկարահանված նյութերը ցուցադրելիս մարդկանց դեմքերը փակելու ո՛չ օրենսդրական, ո՛չ էթիկական հատուկ պահանջներ գոյություն չունեն:

2. Լրագրողների եւ լրատվամիջոցների մասնագիտական գործունեությունը չի կարող սահմանափակվել այն մտայնությամբ, թե երրորդ անձինք, իրավապահ մարմինների ու այլ կառույցների ներկայացուցիչներն այդ հրապարակումները կմեկնաբանեն եւ կծառայեցնեն իրենց շահերի համար կամ մանիպուլյատիվ կերպով կօգտագործեն դրա՝ միայն իրենց ձեռնատու հատվածները: Ավելին, լրագրողական նյութերի բացակայությունը կարող է առավել շատ մանիպուլյացիաների հնարավորություն տալ:

3. Հասարակությունը կարող է ցանկացած կերպով արձագանքել լրատվամիջոցի հրապարակումներին, եւ լրագրողը, իբրեւ հասարակական պարտք կատարող անձ, իր գործողությունների համար կարող է արժանանալ ե՛ւ գովասանքի, ե՛ւ մեղադրանքների, ուստի պետք է պատրաստ լինի հանրության հետ քննարկել իրեն ներկայացվող ամենասուր հարցերը:

Ընդունվել է 2017 թվականի հոկտեմբերի 16-ին՝ Իջեւանում կայացած արտագնա նիստում, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով՝

Հայկուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահ

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության տեղեկատվական և հասարակական-քաղաքական հաղորդումների տնօրեն

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության

կոմիտեի նախագահ

Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ, «Ա1+» հեռուստաընկերության տնօրեն

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երեւանի մամուլի ակումբի նախագահ

Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, Երեւանի Վ. Բրյուսովի անվան

պետական լեզվահասարակագիտական

համալսարանի դասախոս

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: